




ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԻՆ

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՎԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ՍՊԱՀԱՆ, ԻՐԱՆ

Մեծահարգ տիարք.

Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից լիազորված եմք Ձեր սույն քվականի հոկտեմբեր 28-ի գրությամբ առթիվ հայտարարելու հետևյալը, ի գիտություն թեմական խորհրդիդ և Սպահանի թեմի համայն հավատացյալ ժողովրդի.

Ա) Թեմիդ պատգամավորական ժողովի կողմից՝ Ս. Էջմիածնից անջատվելու վերաբերյալ ընդունված որոշումը անհիմն է և ապօրինի, իսկ բերված փաստաթուղթերը՝ կեղծ և շինծու: Պատգամավորական ժողովը չի արտահայտում Սպահանի թեմի հայ բարեպաշտ հավատացյալ ժողովրդի կամքը: Այդ ժողովուրդը դառն շարունակ կապված է եղել իր հավատի կենտրոն Ս. Էջմիածնի հետ՝ անկախ հասարակական-հաղափական պայմաններից և իրաւորությունից, և շարունակում է մնալ այդպիսին: Ոչ ոք իրավունք չունի մեր ժողովրդի սրտից պոկելու դեպի Ս. Էջմիածինը տաժած հավատն ու անսահման սերը:

Թեմական պատգամավորական ժողովի տված որոշումը մի մասնիկն է եկեղեցաբանդ այն անավոր ծրագրի, որը փորձում են գործադրել Հայ եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահերի թշնամի, մեր ժողովրդի հոգևոր-բարոյական միասնությունը ֆանդող մի խումբ անհեռատես, ուղեկորույն մարդիկ, թելադրված գուտ կուսակցական մութ նպատակներից:

Բ) Մայր Աթոռի և Սպահանի թեմի միջև գոյություն են ունեցել ոչ թե ձևական ու անվանական, այլ բնականոն փոխհարաբերություններ, ինչպես անցյալ որևէ ժամանակաշրջանում: Վերջին 3—4 տարվա ընթացքում Մայր Աթոռը ամեն շանն ի գործ է դրել՝ լուծելու թեմակալ առաջնորդի հարցը և բաւելավելու թեմական խորհրդի գաղափարությունը, հենց Իրանի կառավարության 1949 քվականի որոշման դրով, սակայն միշտ էլ հանդիպել է թեմի ազգային-եկեղեցական մարմինների փառ անտարբերության և լուրջան:

Գ) Ելնելով վերոհիշյալից, Մայր Աթոռը հակալանդեռական և չեղյալ է համարում թեմիդ պատգամավորական ժողովի որոշումը՝ Ս. Էջմիածնից բաժանվելու և Անթիլիասին միանալու վերաբերյալ, որոշում, որը միանգամայն հակառակ է իրանահայության կամքին ու հոգևոր-ազգային շահերին:

Դ) Իրանի հայրապետական թեմերը, այդ թվում նաև Սպահանի թեմը եղել են, կան և կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքին և կանոնական-իրավական տեսակետից ո՛չ մի մարմին իրավունք չունի Հայաստանյայց եկեղեցին ու նրա հավատացյալները բաժանելու իրենց դավար նվիրական կենտրոնից՝ Ս. Էջմիածնից:

Աղոթարար՝

ՍՍՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՏՆՆԱՊԵՏ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

27 դեկտեմբերի 1959 թ.

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ի Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Վեհափառ Տե՛ր.

Այսու որդիական պարտք ենք համարում Ձերդ Վեհափառության խոնարհարար հողորդելու, որ Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի պատգամավորական ժողովը, գումարված տարվույս հոկտեմբերի 26-ին, իր հերթական և լիակատար նիստում, թեմս թեմակալ առաջնորդով օժտելու առնչությամբ, Բնության առնելով թեմիս և Ս. Էջմիածնի Մայր Աթոռի փոխհարաբերությունները գտավ, որ 1949 թվականից ի վեր իրանահայ թեմերի համար ստեղծված բացառիկ պայմանների հետևանքով, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Իրանա-Հնդկաստանի թեմի հարաբերությունները ունեցել են միայն անվանական բնույթ: Միաժամանակ ի նկատի առնելով կենսական նշանակություն ունեցող և անհրաժեշտություն ներկայացնող մի շարք այլ պատճառներ, հիմնավորված պատգամավորական ժողովի բանաձևի մեջ, որոշեց դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած իր անվանական և ձևական կապը ևս, և խնդրամատույց լինել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Արքոպի՛ս իր հովանու տակ առնել Իրանա-Հնդկաստանի թեմը:

Մատչելով ի համբույր Ձերդ Վեհափառության Ս. Աջույն, մնամք խորին հարգանք՝

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Նախագահ՝ ԶԱՆԻ ՊԱՐԹԵՎ

Փոխ-Նախագահ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Քարտուղար՝ ՆՍԱՅԻ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

ՆՈՐ-ԶՈՒՂԱ

28 հոկտեմբերի 1958 թ.

